DHCS
CALIFORNIA DEPARTMENT OF
HEALTH CARE SERVICES

Medi-Cal

Ծանուցում Ձեր նպաստների կապակցությամբ լրացուցիչ տեղեկությունների վերաբերյալ (NOAI)՝ «California Children's Services» (CCS) ծրագրի հետ կապված

1. **Ինչպե՞ս է փոխվելու ծրագիրը:**

   California-ում ընդունված նոր օրենքի համաձայն՝ փոխվելու է այն եղանակը, որով Ձեր երեխան ստանում է «California Children's Services» (CCS) ծրագրի ծառայությունները: **2025 թ. հունվարի 1-ից** «Medi-Cal»-ն ընդլայնում է WCM ծրագիրը California-ի ևս 12 շրջանների վրա: Այդ 12 շրջաններում «Medi-Cal»-ի առողջապահական ծրագիրը կվերահսկի CCS ստացող երեխաների բուժսպասարկման համակարգումը, գործի կառավարումը և «California Children's Services»-ի (CCS) այլ ծառայությունները: Այժմ Ձեր երեխան CCS ծառայությունները ստանալու է իր շրջանում գործող բժշկական առողջապահական ծրագրի միջոցով: Դա կոչվում է «Whole Child Model» (WCM) ծրագիր:

   Նախքան նոր օրենքն ընդունելը WCM ծրագիր չունեցող շրջաններում CCS-ի չափանիշներին համապատասխանող խնդիր ունեցող երեխաները բուժսպասարկում էին ստանում և՛ շրջանային CCS ծրագրի, **և՛** իրենց շրջանում գործող «Medi-Cal»-ի առողջապահական ծրագրի կողմից: Այժմ, WCM ծրագրի օգնությամբ, «Medi-Cal»-ը կհամակարգի բոլոր ծառայությունները, որոնք կտրամադրվեն միայն երեխայի «Medi-Cal»-ի առողջապահական ծրագրի միջոցով:

   Այժմ հետևյալ 33 շրջաններում կգործի WCM ծրագիր. Butte, Colusa, Del Norte, Glenn, Humboldt, Lake, Lassen, Marin, Mariposa, Mendocino, Merced, Modoc, Monterey, Napa, Nevada, Orange, Placer, Plumas, San Benito, San Luis Obispo, San Mateo, Santa Barbara, Santa Cruz, Shasta, Sierra, Siskiyou, Solano, Sonoma, Sutter, Tehama, Trinity, Yolo, և Yuba:

2. **Ի՞նչ է WCM ծրագիրը:**

   WCM ծրագիրն օգնում է «Medi-Cal»-ի համար իրավունակ CCS ստացող երեխաներին և նրանց ընտանիքներին ավելի լավ համակարգված բուժսպասարկում ստանալ, ծառայություններն ավելի մատչելի է դարձնում նրանց համար և բարելավում բուժման արդյունքները:

MU_0005221_ARM1_0624

3. **Ինչպե՞ս է «Medi-Cal»-ի առողջապահական ծրագիրը համագործակցելու WCM ծրագրի հետ:**

   WCM ունեցող շրջաններում «Medi-Cal»-ի առողջապահական ծրագրերը համակարգում և արտոնում են CCS-ի չափանիշներին համապատասխանող խնդիրներ ունեցող անդամների բուժսպասարկումը: CCS ծառայությունները տրամադրվում են «Medi-Cal»-ի առողջապահական ծրագրի խմբի անդամ հանդիսացող բժիշկների և մասնագետների կողմից: Այդ բժիշկները և մասնագետները CCS ծրագրի թույլատրագրված սպասարկողներ են, որոնք CCS-ի անդամների հետ աշխատելու որակավորում ունեն: Եթե ծրագրի անդամին այնպիսի մի բուժօգնություն է հարկավոր, որը հնարավոր չէ ստանալ «Medi-Cal»-ի առողջապահական ծրագրի ցանցում, «Medi-Cal»-ի առողջապահական ծրագիրը CCS-ի անդամին կօգնի ստանալ իրեն անհրաժեշտ բուժօգնությունը:

4. **Իմ երեխան կարո՞ղ է պահպանել CCS-ի նույն սպասարկողին:**

   Հնարավոր է, որ Ձեր երեխան կարողանա պահել CCS-ի իր սպասարկողին անգամ եթե վերջինս «Medi-Cal»-ի առողջապահական ծրագրի ցանցում ընդգրկված չէ: Ձեր երեխայի CCS-ի սպասարկողին հարցրեք, թե արդյոք նա աշխատում է Ձեր երեխայի «Medi-Cal»-ի առողջապահական ծրագրի հետ: Եթե CCS-ի թույլատրագրված սպասարկողն աշխատում է այդ ծրագրի հետ, ապա Ձեր երեխան կարող է պահել նույն սպասարկողին: Եթե ոչ, հնարավոր է, որ Ձեր երեխան, այնուամենայնիվ, կարողանա 12 ամիս կամ ավելի երկար պահել CCS-ի նույն սպասարկողին: Այդ գործընթացը կոչվում է «չընդհատվող խնամք» (continuity of care): Կարող եք Ձեր երեխայի «Medi-Cal»-ի առողջապահական ծրագրից լրացուցիչ տեղեկություններ խնդրել: Ձեր երեխան կարող է պահպանել CCS-ի սպասարկողին, անգամ եթե վերջինս ծրագրի ցանցում ընդգրկված չէ (OON): Դուք կարող եք զանգահարել Ձեր երեխայի «Medi-Cal»-ի առողջապահական ծրագիր և խնդրել, որ երեխան պահպանի CCS-ի նույն սպասարկողին, քանի դեռ CCS-ի սպասարկողը և «Medi-Cal»-ի առողջապահական ծրագիրը կարող են աշխատել միասին:

5. **Իմ երեխան կարո՞ղ է պահպանել CCS-ի նույն գործի կառավարչին:**

   Ձեր երեխայի CCS-ի գործի կառավարչին կամ հանրային բուժքրոջը պահելու համար Դուք կարող եք «չընդհատվող խնամք» խնդրել: Եթե «Medi-Cal»-ի առողջապահական ծրագիրը և շրջանը չկարողանան համաձայնության գալ, Ձեր երեխային գործի կառավարիչ կնշանակվի «Medi-Cal»-ի իր ծրագրի միջոցով:

6. **WCM ծրագրում իմ երեխան կշարունակի՞ CCS-ի նույն նպաստները ստանալ:**

   Այո: WCM ծրագրում Ձեր երեխան կշարունակի CCS-ի նույն նպաստները ստանալ: Ձեր երեխան կշարունակի ստանալ CCS-ի այն ծառայությունները, որոնք բժշկական առումով անհրաժեշտ են և նշանակվում են նրան երեխայի սպասարկողի կողմից:

7. **Ինչպե՞ս իմանամ, թե արդյոք իմ երեխան ընդգրկվելու է WCM ծրագրում:**

   Ձեր երեխան կընդգրկվի WCM ծրագրում, եթե նա անդամագրված է թ. 1 հարցում թվարկված 33 շրջաններից որևէ մեկում գործող «Medi-Cal»-ի առողջապահական ծրագրում և բավարարում է CCS ծառայություններ ստանալու պահանջները:

8. **WCM ծրագիրը փոխելո՞ւ է CCS խնամք ստանալու գործընթացը:**

   WCM ծրագիրը համակարգում է Ձեր երեխայի ամբողջ խնամքը և տեղեկություններ է տրամադրում Ձեր երեխայի սպասարկողներին: Դա ապահովում է, որ Ձեր երեխան իր ամբողջ խնամքը, այդ թվում՝ CCS ծառայությունները և պաշարները ստանա «Medi-Cal»-ի իր առողջապահական ծրագրից: WCM ծրագիրը Ձեր երեխային հնարավորություն կտա օգտվելու մասնագիտական բուժօգնությունից՝ ելնելով CCS-ի պահանջներին համապատասխանող իր խնդրից: WCM ծրագիրը կաշխատի պահել Ձեր երեխայի CCS սպասարկողներին:

9. **Որտեղի՞ց կարող եմ ավելին իմանալ կամ օգնություն ստանալ:**

   - Եթե հարցեր ունեք Ձեր երեխայի CCS ծառայությունների և WCM ծրագրի մասին, զանգահարեք Ձեր երեխայի «Medi-Cal»-ի առողջապահական ծրագիր: Հեռախոսի համարը նշված է Ձեր երեխայի «Medi-Cal»-ի առողջապահական ծրագրի քարտի հակառակ երեսին: Զանգն անվճար է:

   - Հարցերի դեպքում կարող եք նաև զանգահարել Ձեր երեխայի շրջանային CCS ծրագրի գրասենյակ: Շրջանի հեռախոսահամարը գտնելու համար այցելեք **www.dhcs.ca.gov/services/ccs/Pages/CountyOffices.aspx**:

   - Առողջապահական ծրագրերի և սպասարկողների՝ Ձեզ հասանելի տարբերակների (բժիշկների կամ կլինիկաների) մասին լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք «Medi-Cal»-ի «Health Care Options» (HCO)՝ երկուշաբթի - ուրբաթ օրերին, առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան 6-ը՝ **1-800-840-5032** (TTY՝ 1-800-430-7077) հեռախոսահամարով: Զանգն անվճար է: Կամ այցելեք **www.healthcareoptions.dhcs.ca.gov**:

   - Եթե հարցեր ունեք «Medi-Cal»-ի վերաբերյալ, զանգահարեք «Department of Health Care Services»-ի (DHCS) «Medi-Cal»-ի օգնության գծին՝ երկուշաբթի - ուրբաթ օրերին, առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան 5-ը՝ **1-800-541-5555** հեռախոսահամարով: Զանգն անվճար է:

   - Եթե «Medi-Cal»-ի հետ կապված գանգատներ կամ խնդիրներ ունեք, զանգահարեք «Medi-Cal Ombudsman»-ի գրասենյակ՝ երկուշաբթի - ուրբաթ օրերին, առավոտյան ժամը 8-ից երեկոյան ժամը 5-ը՝ **1-888-452-8609** (TTY՝ 711՝ «California State Relay»-ի համար) հեռախոսահամարով: Զանգն անվճար է: Կամ էլեկտրոնային հաղորդագրություն ուղարկեք **MMCDOmbudsmanOffice@dhcs.ca.gov** հասցեով: Նրանք օգնում են «Medi-Cal» ունեցող անձանց օգտվել իրենց նպաստներից և իմանալ իրենց իրավունքներն ու պարտականությունները: